4) «Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2014 թվականի հուլիսի 7-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերակառուցման, վերանորոգման և կահավորման աշխատանքների իրականացում՝ 182,157,809 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ ծրագրի ավարտից հետո, մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության նախագահ Ռ. Հայրապետյանի կողմից

«16» հուլիսի 2014թ.

Ա-8/5

«Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիայի չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն - (UEFA - Շվեյցարիա, Ժնև) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ՝ 02566915) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվում է Երևան քաղաքում, սպորտի բնագավառում |
| 6. | Ծրագրի բյուջեն | 399,528,726 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացի» իրավաբանական անձանց միությունը՝ ի դեմս Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2014 թվականի հուլիսի 7-ից մինչև 2014 թվականի սեպտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ընդհանուր շինարարական աշխատանքներ՝ 183,657,809 դրամ,<br>2. Օդափոխություն և ջեռուցում՝ 8,009,917 դրամ,<br>3. Մետաղական պտտադռների պատրաստում և տեղադրում՝ 17,406,000 դրամ,<br>4. Մարզադաշտի խաղադաշտի սարքավորումների, շինանյութերի, ներքին հարդարման նյութերի և պարագաների, էլեկտրոնային մուտքի ու տեսահսկման համակարգերի համար անհրաժեշտ սկավառակների, սերվերների, տպիչ սարքերի, սարքավորումների և տեսախցիկների ներմուծում՝ 190,455,000 դրամ: |

Ա-8/5

2

| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - Հանրապետական մարզադաշտի մամուլի կենտրոնի նախագծի կազմում՝ 1,500,000 դրամ,<br>- Հանրապետական մարզադաշտի մետաղյա կարկասների, միջնորմային պատերի, կախովի առաստաղների, վիտրաժների և սահմանզույցների սարքավորումների ապամոնտաժման աշխատանքներ, ջրամատակարարման և ներքին կոյուղու ցանցի կառուցում, միջնորմների և պատերի, մետաղական կոնստրուկցիաներով ծածկի կառուցում, էլեկտրամոնտաժ, ներքին հարդարում, երեսպատում, կահավորում, մետաղական անցուղիների և մետաղական ճաղավանդակներով արտաքին պարիսպի կառուցում՝ 182,157,809 դրամ,<br>- Օդափոխություն և ջեռուցում՝ 8,009,917 դրամ,<br>- Մետաղական պտտադռների պատրաստում և տեղադրում՝ 17,406,000 դրամ:<br>Մարզադաշտի խնամքի սարքավորումների, շինանյութերի, ներքին հարդարման նյութերի և պարագաների, էլեկտրոնային մուտքի համակարգի համար անհրաժեշտ հաշվիչ սկաներների, ծրագրային սարքավորումների, սերվերների, տպիչ սարքերի և տեսահսկման համակարգի համար անհրաժեշտ տեսախցիկների և սարքավորումների ներմուծում՝ 190,455,000 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Երևանի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.2014թ. № 07/80-2/9234-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.07.2014թ. N 15/15.6/11071-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ կից ներկայացված ծրագրի 10-րդ կետից երևում է, որ նախատեսվում է մարզադաշտի խնամքի համար ներմուծել 109.455.000 ՀՀ դրամ գումարի չափով ապրանքներ, իսկ ծրագրի 9-րդ կետում՝ ներմուծման համար նախատեսված է այլ գումար (190.455.000 ՀՀ դրամ): Ուստի առաջարկում ենք վերախմբագրել ծրագիրը՝ համապատասխանեցնելով ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված ներմուծվող ապրանքների արժեքները:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/21440-14
14.07.2014թ.

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

Ար 8/5

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

0078, Երևան, Հալաբյան 41ա, հեռ.380-382, էլ. փոստ arsen.mkrtchyan@justice.am

14.07.2014թ. N 02/4922-14

Ձեր N ____________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի կատարումն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 8-ի 15/15.6/11071-14 թվակիր հանձնարարականի հայտնում ենք, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի դրույթներն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի «Բարեգործական ծրագրերի մասին» թիվ 66-Ն որոշման պահանջները, մասնավորապես՝ ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել նախատեսվող միջոցառումների ժամկետները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

????? ????????
Jul 11 2014 6:29 PM

Կատարող՝ Ալլա Ստեփանյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ.՝ (010) 380-227

035/21442-14
14.07.2014թ.

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

N: 06/3-2/9381-1
15.07.2014թ.

Ար 8/5

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 8-ի թիվ 15/15.6/11071-14 գրության հայտնում ենք, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում առարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342,

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ
# FOOTBALL FEDERATION OF ARMENIA

ԽՐ-8/5

16.07.14թ.
Ֆ/1 074

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 14-ի թիվ 07/80-2/9234-14 գրությամբ ներկայացված կարծիքը՝ «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի վերաբերյալ, կից ներկայացնում ենք նշված ծրագրի լրամշակված տարբերակը:

Նախագահ Ռ. Հայրապետյան

1546

ՀՀ ... 094-21873 16.07.14թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 0010, ԵՐԵՎԱՆ, ԽԱՆՋՅԱՆ 27
0010 KHANJYAN str. 27, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA
ՀԵՌԱԽՈՍ/PHONE: +374 10 54 88 85, ՖԱՔՍ/FAX: +374 10 54 71 73
e-mail: ffarm@arminco.com, URL: www.ffa.am

ԽՐ-8/5

# ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառուցվածքների արդիականացում և բարելավում» ծրագրի մասին» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| կից ներկայացված ծրագրի 10-րդ կետից երևում է, որ նախատեսվում է մարզադաշտի խնամքի համար ներմուծել 109.455.000 դրամ գումարի չափով ապրանքներ, իսկ ծրագրի 9-րդ կետում՝ ներմուծման համար նախատեսված է այլ գումար (190.455.000 դրամ): Ուստի առաջարկում ենք վերախմբագրել ծրագիրը՝ համապատասխանեցնելով ծրագրի 9-րդ և 10-րդ կետերում նշված ներմուծվող ապրանքների արժեքները: | Հաշվի է առնվել՝ ներկայացվել է լրամշակված ծրագիր: |
| **ՀՀ արդարադատության նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| ծրագրի 9-րդ կետում անհրաժեշտ է նշել նախատեսվող միջոցառումների ժամկետները | Հաշվի չի առնվել՝ նպատակահարմար չենք համարում կարճաժամկետ ծրագրերում (երեք ամիս տևողությամբ) նշել առանձին միջոցառումների իրականացման ժամկետները: |

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա Մ-8/6.1

քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Ս.Վ. ՄԱԼԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N և N, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի -ի N եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իտալիայից՝ անհատ բարերար Լարիսա Նաուշկինայի կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (դեղ և բժշկական պարագաներ, 2 տեղ, 81 կգ ընդհանուր քաշով, 3,435 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը: Ներմուծվող դեղը և բժշկական պարագաները նախատեսված են խրոնիկական փայտանման կոնյուկտիվիտ հիվանդությամբ տառապող երեխայի՝ Հակոբ Ռոմանոսի Ավդալյանի, համար (բնակության հասցեն՝ ՀՀ, Շիրակի մարզ, Ք. Մարալիկ, Ռիգայի 104 տուն):

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ**

Մ-8/6.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.14թ. № 07/80-2/9354-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.07.2014թ. N 15/15.11/11287-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

14.07.14թ

№ 034/21539-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Մ. 8/6.1

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

15. 07. 14թ. N ՉհՐ/22.1/7226-14

Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.07.2014թ. թիվ 15/15.11/11287-14 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Էդուարդ Էքմեքջյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային
քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

15. 07. 14թ
№ 020/21587-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

15. 07. 14թ
№ 06/3-2/9401-14

Մ. 8/6.1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 10-ի Ձեր թիվ 15/15.11/11287-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ս.Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

15. 07. 14թ
№ 034/21607-14

**ՆԱԽԱԳԻԾ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հուլիսի 2014 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

ԽՐ·8/6.2

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -14 և հուլիսի -ի N -14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Սանտա-Բարբարա քաղաքից «Դիրեքտ Ռելիֆ» ոչ առևտրային կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի (1 տեղ, 4,5 կգ ընդհանուր քաշով, 20,137.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 65100 դրամ, ՄՓԵՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ԽՐ·8/6.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.14 №

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.07.2014թ. N 15/15.1/11345-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

034/21536-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

8/6.2

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

16.07.14 N /22.1/7301-14

Ձեր N ______________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 11.07.2014թ. թիվ 15/15.1/11345-14 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

020/21853-14

Կատարող՝ Էդուարդ Էքմեքջյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային
քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

06/3-2/9499-14
16.07.14
8/6.2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 11-ի Ձեր թիվ 15/15.1/11345-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ սկզբունքային առաջարկություններ չկան:

Միաժամանակ հայտնում եմ, որ նախագծին կից ներկայացված փաթեթում մաքսային հսկողության համար անհրաժեշտ է ներառել փոխադրումը հաստատող փաստաթուղթը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

034/21802-14

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

Ա ՁԵՎԱԿԵՐՊՈՂ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ

1 ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ IM 5

13 ՄՓԵՄԱՄՓՄ Մ/Տ

Գրանցման համար: C 6661 11/06/2014

դր 8/6.2

2 Արտահանող No. Direct Relif ԱՄՆ

3 Ձևեր 1 2 | 4 Թերթեր 15 | 5 Ապրանք 4 | 6 Տեղ. քանակ 1 | 7 Տեղեկատու համար 2014 000076

8 Ստացող No 01538293 «ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչ.» Մոսկովյան 11 Երևան Perm.Repres.ofTtheRepub.ofMount.Kar Yerevan 7999

9 Ֆինանսական պատասխանատու: 01538293 «ՀՀ-ում ԼՂՀ Մշտական Ներկայացուցչ.» Մոսկովյան 11 Երևան

10 Նշանակ. վերջին երկ. | 11 Առևտր. անող 840 երկ. | 12 Արժեք 65,100 | 13

14 Հայտարարատու No 01012333 «Էյչ Վի Քոմփանիոն» ՍՊԸ Քանաքեռ ՀԷԿ 2/2-24 Երևան Հ 1986

15 Արտահանման երկիր ԱՄՆ | 15 Ա.Ե.Ծ. a 840 | 17 Ն.Ե.Ծ. a 051

16 Ծագման երկիր ՏԱՐԲԵՐ | 17 Նշանակման երկիր Հայաստան

18 Փոխադրամիջոց մեկնման / ժամանման վայրում ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՓՈՍՏ 000 | 19 Բեռ | 20 Բազիսային պայման

21 Փոխադրամիջոց սահմանում ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ ՓՈՍՏ 000 | 22 Տարադրամ / արժեք 840 20,137.51 | 23 Փոխարժեք 412.000 | 24 Գործարքի բնույթ 8 8

25 Փոխադրամիջոց 40 սահման | 26 Փոխադրամիջոց 50 ներքին | 27 Բեռնման / բեռնաթափման վայր | 28 Ֆինանսական և բանկային տվյալներ: Բանկի ծածկ.

29 Մաքսային կետ 13 ՄՓԵՄԱՄՓՄ Մ/Տ | 30 Ապրանքի զննման վայր | Բանկի անուն: ՀՎՀՀ N:

1 Տեղեր, բեռն. ապրանքի նկարագր. | Պիտակ, տեղերի քանակ և տեսակ, բեռնարկղի համարներ | Պայմաններ: Նամակ ՄՓՄՄՓՄ N1712 առ 23.05.14թ | Տեղեր ՀՀԱՆ ՆՊվմ.N 1643-14 առ 04.06.14թ | քանակություն: 30 | Այլ | Բեռնարկղերի համար...| ՍՏՔ ՄՄ | Չեղեր ըստ հմ առ 12.05.14թ

32 Ապր 1 No. | 33 Ապրանքի ծածկագիր 30049000 090 0000 0000

34 Ծ.Ե.Ծ. a 616 | 35 Բրուտտո քաշ (կգ) 0.125 | 36 Արտոնութ.

37 Ընթաց. 5000 000 | 38 Նետտո քաշ (կգ) 0.125 | 39 Քվոտա

40

41 Լրաց. միավոր 166 0.125 | 42 Ապրանքի գին 144.27 | 43 Մ.Ա.Մ. 1

Լիցենզիա N: / / ՀՀ: 1,816 + 0 + 0 + 0 - 0 Պ.Փ.: 033 No.

45 1

46 Մաքսային արժեք 61.255

Տեսակ | Հարկման հիմք | Դրույքաչափ | Գումար | ՎՁ | 48 Վճարման հետաձգում | 49 Պահեստ / օր 90

Ընդամենը: 0 0

Բ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

Վճարման ձև: Կանխիկ

Գանձումային համար: L6112 Ամսաթիվ 11/06/14.

Անդորրագրի համար: R 5918 Ամսաթիվ 11 JUN 2014

Երաշխիք: 0 Ամսաթիվ

Մաքսավճար: 9,500

Ենթակա է վճարման: 9,500

50 Ակզբ. No | Ստորագրություն: | Վայր և ամսաթիվ:

Ծածկագիր | 53 Նշանակման մաքսային մարմին

Դ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ Արդյունք: Ընդունված է Կնիքի նշան: | Ժամկետ (Time limit(date)) | Ստորագրություն: 11 06 14

54 Վայր և ամսաթիվ 01012333 Էյչ Վի Քոմփանիոն

«H V COMPANION» 01012333

11 JUN 2014

# ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» որոշման նախագծի վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն - 16.07.14, N 06/3-2/9499-14 | |
| 1. Նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ սկզբունքային առաջարկություններ չկան: Միաժամանակ հայտնում եմ, որ նախագծին կից ներկայացված փաթեթում մաքսային հսկողության համար անհրաժեշտ է ներառել փոխադրումը հաստատող փաստաթուղթը: | 1. Կցված է բեռնամաքսային հայտարարագրի պատճենը |

դր. 8/6.2

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա ԱՐ-8/6.3

քաղ. Երևան

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 07/80-2/-14 և հուլիսի -ի N 06/-/-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (6 տեղ, 76 կգ ընդհանուր քաշով, 2,856.40 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ծանակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

ԱՐ-8/6.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.2014թ. № 07/80-2/9352-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.07.2014թ. N 15/15.6/11319-14 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N 1) որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ ու առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

034/21530-14
14.07.2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ**

**ՆԱԽԱՐԱՐ**

Մ. 8/6.3

«15» 07 2014 թ. № 1/06/706-14

ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
հեռ./ֆ.՝ (374 10) 526-529
էլ. փոստ՝ msy@msy.am
էլ. կայք՝ www.msy.am

Ձեր 2014 թ. հուլիսի 11-ի № 15/15.6/11319-14 գրության

*Հայաստանի Հանրապետության*
*կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման*
*հանձնաժողովի նախագահ*
*Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (№ 1)» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

*Հարգանքով՝*

*Գ. Ղազարյան*

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչություն
Թ. Հովհաննիսյան, հեռ.՝ 52-69-95

022/21747-14
15.07.2014 թ.

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

№ 06/3-2/9714-14
18.07.2014 թ.

Մ. 8/6.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 11-ի Ձեր թիվ 15/15.6/11319-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 1)» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

031/22072-14
18.07.2014 թ.

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

___ հուլիսի 2014 թվականի N Մ - -Ա

քաղ. Երևան

Ա. 8/6.4

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 07/80-2/-14 և հուլիսի -ի N 06/-/-14 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -13 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Սուսերամարտի միջազգային ֆեդերացիայի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (6 տեղ, 149 կգ ընդհանուր քաշով, 6,244 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 1,420 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ա. 8/6.4

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.2014թ. № 07/80-2/9350-14

Ձեր № ______________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.07.2014թ. N 15/15.6/11340-14 գրության՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» (N 2) որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ ու առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

034/21537-14
14.07.2014թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ**

**ՆԱԽԱՐԱՐ**

Ա-8/6.4

«15» 07 2014 թ. № 1/06/708-14

ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
հեռ./ֆ.՝ (374 10) 526-529
էլ. փոստ՝ msy@msy.am
էլ. կայք՝ www.msy.am

Ձեր 2014 թ. հուլիսի 11-ի № 15/15.6/11340-14 գրության

*Հայաստանի Հանրապետության*
*կառավարության բարեգործական*
*ծրագրերի համակարգման*
*հանձնաժողովի նախագահ*
*Ս. Տեր-Սիմոնյանին*

*Հարգելի՛ պարոն Տեր-Սիմոնյան*

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ««Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (№ 2)» որոշման նախագծի վերաբերյալ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը առաջարկություններ և դիտողություններ չունի:

*Հարգանքով՝*

*Գ. Ղազարյան*

Կատարող՝ սպորտի բարձրագույն նվաճումների
քաղաքականության վարչություն
Թ. Հովհաննիսյան, հեռ.՝ 52-69-95

022/21761-14
15.07.2014թ.

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ**

Ա-8/6.4

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

№ 06/3-2/9706-14
18.07.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 11-ի Ձեր թիվ 15/15.6/11340-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին (N 2)» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

034/22045-14
18.07.2014թ.

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N Մ-625-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -14 և հուլիսի -ի N -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից ձեռք բերված բիտումի խմբաքանակները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի կառուցման համար բիտումի ներկրում» ծրագրի մասին» N Մ-625-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում.

1) 4 տեղ, 90,510 կգ ընդհանուր քաշով, 45,617.04 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմել են 4,344.5 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն.

2) 4 տեղ, 94,320 կգ ընդհանուր քաշով, 52,066 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն.

3) 5 տեղ, 114,910 կգ ընդհանուր քաշով, 63,430 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ բեռնափոխադրման ծախսերը, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 3.8-2/ -14 և հուլիսի -ի N 3.8-2/ -14 ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N ԴԴ/22/ -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Շվեյցարիայի Էլեոնորեն հիմնադրամի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված ռենտգենյան ճառագայթումից պաշտպանիչ միջոցների (1 տեղ, 22.7 կգ ընդհանուր քաշով, 1,469 շվեյցարական ֆրանկ արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 180 շվեյցարական ֆրանկ, ՄՓԵւՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա և 2013 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1259-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.14 №07/80-2/19336-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 09.07.2014թ. N 15/15.1/11125-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

024/21500-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

11.07.14 N ԱՄ/22.1/7842-14

Ձեր N

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 09.07.2014թ. թիվ 15/15.1/11125-14 գրության կապակցությամբ՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Էդուարդ Էքմեքջյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

020/21331-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ**

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

06/3-2/9415-14 ԱՐ 8/6.6
15.07.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 9-ի Ձեր թիվ 15/15.1/11125-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամ»)» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

034/21630-14

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

ԱՐ 8/6.7

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -14 և հուլիսի -ի N -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ծիծեռնակաբերդ» հիմնադրամի կողմից ձեռք բերված տեսահամակարգի ապրանքների (42 կգ ընդհանուր քաշով, 1,095 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 180 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի «Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքներ» (4-րդ փուլ)» N Մ-293-Ա որոշմամբ որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-Ձ/6.7

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.14 №07/80-2/9356-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 11.07.2014թ. N 15/15.1/11341-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

034/21538-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

06/3-2/9390-14 Ա-Ձ/6.7
15.07.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 11-ի Ձեր թիվ 15/15.1/11341-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 11-ի N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամ)» Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

034/21593-14

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-947-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱԳԱՊԵ» ԲԱՐԵԳՈՐ-ԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի- ի N -14 և հուլիսի- ի N -14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հուլիսի- ի N -14 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N -14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Ագապե» բարեգործական կազմակեր-պության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող .«Մարդկային տառապանքը որպես պատերազմի և բնական աղետի հետևանք» ծրագրի մասին» N Մ-947-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 10-րդ կետի 1-ին ենթակետում ներմուծվող ապրանքների ցանկին ավելացնել «պահեստամասեր Ֆորդ և Դոջ մակնիշի մարդատար ավտոմեքենաների համար» բառերը:

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հյուսիսային Կարոլինա նահանգի մեթոդիստական եկեղեցու կողմից Միացյալ հայկական հիմնադրամի միջոցով «Ագապե» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) 2773 տեղ, 7,016 կգ ընդհանուր քաշով, 99,680.25 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 7500 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն.

2) 20 տեղ, 18,521 կգ ընդհանուր քաշով, 91,610.04 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 6,533 ԱՄՆ-ի դոլար, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարու-թյուն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հան-րապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

PROJECT AGAPE

ԳՈՒՅՔԱՑՈՒՑԱԿ - UA-064G-1955
Բեռնագիր - NAM1878778
1 x 40' կոնտեյներ - TRLU7505199
Բեռնված 2014 թ. հունիսի 17-ին
Միացյալ Մեթոդիստական եկեղեցու
Արևմտյան Հյուսիսային Կարոլինայի համաժողովի (բեմի) կողմից
Փ. 18005
ԱՄՆ, Հյուսիսային Կարոլինա, Շառլոտ, 28212

Պարունակությունը՝ նվիրաբերված մարդասիրական օգնություն, իրեր ոչ վաճառքի համար

Առաքիչ՝ Միացյալ Հայկական Հիմնադրամ
Ն. Խաղաղության պողոտա 1101, Սուիթ 204
ԱՄՆ, ԿԱ, Գլենդել, 91202

Առաքման վայր՝ ԱՄՆ «ԱԳԱՊԵ» ԿԲԿ ՀՀ մասնաճյուղ
Նիկոլ Դումանի 24ա
Հայաստանի Հանրապետություն, Երևան, 375028,
Նարա Մելքոնյան, հեռախոս՝ 011-37410-26-07-56

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | ԱՐԿՂ | Քաշը (կգ) | ԱՐԺԵՔ |
|---|---|---|---|
| Ծածկոցներ | 1 | 3.6 | 60.00 |
| Անկողնային պարագաներ | 17 | 107 | 1,270.20 |
| Երեխաների Ամանորյա տուփեր | 2344 | 2697.8 | 43,164.80 |
| Գլխարկներ նոր | 11 | 29.7 | 1,305.00 |
| Հագուստ և աքսեսուարներ | 251 | 2412.1 | 41,549.20 |
| Պահածոյացված սննդամթերք | 2 | 32 | 85.25 |
| Կենցաղային պարագաներ | 4 | 26.8 | 88.10 |
| Բժշկական պարագաներ | 18 | 140.3 | 2,384.00 |
| Թուղթ | 18 | 350.5 | 1,436.00 |
| Կարուձևի պարագաներ | 45 | 257 | 3,191.20 |
| Կոշիկներ նոր | 1 | 5.8 | 124.80 |
| Խաղալիքներ նոր | 3 | 18.2 | 247.20 |
| Փչովի լողավազան | 2 | 16 | 70.00 |
| Արկղերի տակդիրներ | 15 | 280 | 150.00 |
| Թիթեղյա արկղեր | 2 | 160 | 100.00 |
| Շինարարական գործիքներ | 2 | 5.5 | 76.00 |
| Փոշեկուլ | 1 | 12 | 119.00 |
| Սղոց | 1 | 10 | 169.00 |
| Կահույք - ներքնակներ, 1 նորածնի մահճակալ | 7 | 158 | 935.00 |
| Մարդաբեռնատար մեքենայի պահեստամասեր (զտիչներ, մղիչ, գործիքներ) | 13 | 40.5 | 929.50 |
| Մարդաբեռնատար մեքենայի յուղեր | 7 | 73.2 | 334.00 |
| Մարդաբեռնատար մեքենայի անվադողեր | 8 | 180 | 1,892.00 |
| | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 2773 | 7016 | 99,680.25 |

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՄՆ «ԱԳԱՊԵ» կրոնաբարեգործական կազմակերպության ՀՀ մասնաճյուղի հասցեով
2014թ. հունիս ամսին ուղարկված մարդասիրական բեռան բաշխման ցուցակ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ս.թ. հուլիսի 11-ի Ձեր թիվ 15/15.4/11359-14 գրությամբ ներկայացված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման ծրագրի մասին (Ֆրանսիայի՝ «Բժիշկներ առանց սահմանների միության հայաստանյան մասնաճյուղ»)» ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060544390, 060544342

034/21592-14
15.07.14թ

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**____ հուլիսի 2014 թվականի N Մ- - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-585-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

**(«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-14 և հուլիսի -ի N ՎՄ/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից ստացված ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2012 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում.

1) փայտե շինարարական վահանակներ, կոնստրուկցիոն դետալներ (C 6046, 858 տեղ, 15,300 կգ ընդհանուր քաշով, 29,335,45 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

2) փայտե շինարարական վահանակներ, չորսուներ, կոնստրուկցիոն դետալներ (C 5698, 46 տեղ, 16,854 կգ ընդհանուր քաշով, 25,915 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,400 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

3) փայտե շինարարական վահանակներ (C 6425, 9 տեղ, 828 կգ ընդհանուր քաշով, 1,119,69 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,450 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

4) փայտե շինարարական վահանակներ, չորսուներ, կոնստրուկցիոն դետալներ (C 6044, մեկ տեղ, 20,045 կգ ընդհանուր քաշով, 25,004 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ; փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

5) փայտե շինարարական վահանակներ, չորսուներ, կոնստրուկցիոն դետալներ (C 5951, 110 տեղ, 20,470 կգ ընդհանուր քաշով, 25,658 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

6) փայտե շինարարական վահանակներ, կոնստրուկցիոն դետալներ (C 5679, 109 տեղ, 14,122 կգ ընդհանուր քաշով, 52,898 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

7) փայտե շինարարական վահանակներ (C 5681, 73 տեղ, 18,386 կգ ընդհանուր քաշով, 18,741,47 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,739 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

8) փայտե շինարարական վահանակներ, բրուսներ, կոնստրուկցիոն դետալներ (C 5697, 1,351 տեղ, 17,425 կգ ընդհանուր քաշով, 77,247,4 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,350 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

10) փայտե շինարարական վահանակներ (C 5726, 14 տեղ, 17,808 կգ ընդհանուր քաշով, 18,537,48 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,739 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

11) փայտե շինարարական վահանակներ, կոնստրուկցիոն դետալներ (C 6272, 465 տեղ, 7,163 կգ ընդհանուր քաշով, 120,000 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,950 եվրո, ՄԾՓ Տ/Մ);

12) փայտյա տնակ (C 5689, մեկ տեղ, 8,030 կգ ընդհանուր քաշով, 45,992,86 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 6,400 եվրո, ՄԾՓ Տ/Մ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-8/6.13

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

3.07.2014թ № 07/80-2/8553-14

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 01.07.2014թ. N 15/15.4/10542-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի N Մ-585-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

034/20288-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Ա-8/6.13

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

06/3-2/8908-14
09.07.2014թ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 1-ի թիվ 15/15.4/10542-14 գրության հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-585-Ա որոշմամբ (2012 թվականի դեկտեմբերի 20-ի N Մ-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով ներմուծված ապրանքների ձեռքբերման և տեղափոխման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

Հարգանքով՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342,

034/20848-14
09.07.2014թ

# ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի N Ա-585-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման ծրագրի մասին («Հայկական Կրիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության (հարկային, մաքսային) դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| Հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 27-ի «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Ա-585-Ա որոշմամբ (2012 թվականի դեկտեմբերի 20-ի N Ա-1264-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով ներմուծված ապրանքների ձեռքբերման և տեղափոխման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը | Կազմակերպությունը ֆինանսների նախարարությանը ներկայացրել է ներմուծված ապրանքների ձեռքբերման և տեղափոխման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը: |
| | |
| | |

Ա-8/6.13

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ

Հ. Սարգսյան փող, նրբանցք 3, տուն 8
Գյումրի, Հայաստան
Հեռ. (374312) 57201 / Ֆաքս. (374312) 57849
Էլ-փոստ.caritas@cararm.am
www.caritasarm.am

ARMENIAN CARITAS

8, sidestreet 3, H. Sargissian St,
Gyumri, Armenia
Tel: (374312) 57201 / Fax: (374312) 57849
E-mail: caritas@cararm.am
www.caritasarm.am

AC-185-14

16 հուլիսի, 2014թ.

Ա-Ծ/6.13

ՀՀ Ֆինանսների նախարարության
Նախարարի տեղակալ՝ պրն. Վ.Միրումյանին

Պատճենը՝
ՀՀ կառավարության բարեգործական
Ծրագրերի համակարգման հանձնաժողովի
Նախագահ՝ պրն. Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պրն. Միրումյան,

Ի պատասխան Ձեր 09.07.2014թ. թիվ 06/3-2/8908-14 գրության՝ ուղարկում ենք Ձեզ «Բազմակի հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի և տեղեկատվության կենտրոնի կառուցում» ծրագրի մասին թիվ Ա-585-Ա որոշմամբ /2012թ. դեկտեմբերի 20-ի թիվ Ա-1264-Ա որոշման խմբագրությամբ/ հաստատված ծրագրի շրջանակներում Կարիտաս Ավստրիայի կողմից «Հայկական Կարիտաս» ԲՀԿ հասցեով ներմուծված ապրանքների ձեռքբերման և տեղափոխման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

Հարգանքներով՝

Գագիկ Տարասյան
Գործադիր Տնօրեն

1569

ՀՀ ...
107-2209/1
17 07 14

***ՆԱԽԱԳԻԾ***

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**___ հուլիսի 2014 թվականի N Մ - -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 07/80-2/-14 և հուլիսի -ի N 06/-/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված պղնձյա ժապավենը (8 տեղ, 16,468 կգ ընդհանուր քաշով, 5,785,935 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 100,000 ռուսական ռուբլի, «Գուգարքի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ**

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

08.07.2014թ. № 07/80-2/8825-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.07.2014թ. N 15/15.6/10733-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Տաշիր» բարեգործական հիմնադրամի)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Մ. Հարությունյան
Հեռ. 060 700 227

034/20713-14
08.07.2014թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Մ 8/6.14

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7


N: 06/3-2/8988-14
09.07.2014թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս.թ. հուլիսի 3-ի թիվ 15/15.6/10733-14 գրության հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից ներմուծված ապրանքների (8 տեղ, 16,468 կգ ընդհանուր քաշով, 5,785,935 ռուսական ռուբլուն համարժեք ՀՀ դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 100,000 ռուսական ռուբլի) տեղափոխման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը:

Հարգանքով՝ Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

034/20942-14
09.07.2014թ.


Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342,



«ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ՀՀ, ք. Երևան, Խորենացու փողոց 33
Հեռ: (3741)-54 53 05
Հեռ/Ֆաքս: (3741)-545435

«TASHIR» CHERITABLE FUND
Khorenatzi st. 33, Yerevan, 375010, RA,
Tel: (3741)-54 53 05
Tel/Fax: (3741)-54 54 35


№ 027

«11» հուլիսի 2014թ.

Մ 8/6.14

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
Համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Ֆինանսների Նախարարության No 06/3-2/8988-14, 09 հուլիսի 2014 թվականի գրության, Ձեզ ենք ներկայացնում ապրանքների տեղափոխման ծախսերը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ա. Վարոսյան

099-21346
11.07.14

ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
**"КАЛУГАГЛАВСНАБ"**

РЕГИСТР РСТ ИСО 9001

248017, г. Калуга, ул. Азаровская, 2
Тел.факс: (4842) 71-64-58,
(4842) 71-64-74
E-mail kgs@tashir.com
www.kgs.kaluga.ru

Р/счет: 4070 2810 8000 1000 0001
К/счет: 3010 1810 0000 0000 0770
Филиал АКБ "ФОРА-БАНК"(ЗАО)г. Калуга
ИНН / КПП 4028001072 / 402801001
БИК 042908770

№ 151/16 "11" июля 2014 г.

Н. 8/6.17

Директору
Благотворительного фонда «Ташир»
Варосяну А.С.
Республика Армения, 2101, Марз Лори, г. Ташир, ул. Джаункяна, 10

Настоящим письмом подтверждаем, что стоимость товара, отгруженного в адрес Благотворительного фонда «Ташир» по счету-фактуре № 7031 от 03.06.2014 г., составила 5 685 935 (Пять миллионов шестьсот восемьдесят пять тысяч девятьсот тридцать пять) рублей 00 копеек, а транспортные услуги по доставке товара в Республику Армения составили 100 000 (Сто тысяч) рублей 00 копеек.

Генеральный директор Лукьянович Е.Е.

Главный бухгалтер Калашников В.И.

---

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հուլիսի 2014 թվականի N Մ - -Ա
քաղ. Երևան

Н. 8/6.15

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 07/80-2/-14 և հունիսի -ի N 06/3-4/-14 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ջրի պոմպերը (մեկ տեղ, 280 կգ ընդհանուր քաշով, 6,457 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 600 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ)
Հայաստանի ներկայացուցչության անօրենի
պաշտոնակատար Զ. Տեր-Մինասյան
«14» հունիսի 2014թ.

«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի Մելիք Ադամյան 2/2 հասցեում 1307,51 քմ հողատարածքում կառուցել սփյուռքի համահայկական խոշորագույն կազմակերպություններից մեկի՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Երևանյան կենտրոնատեղի և Երևան քաղաքին պատկանող ստորգետնյա ավտոկայանատեղի՝ ՀՀ կառավարության համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Անհատ սփյուռքահայ բարերարներ պարոն Պերճ Սեդրակյան (հասցե՝ 191 Cedar Street, Englewood NJ 07631, ԱՄՆ) և պարոն Նազար Նազարյան (հասցե՝ 147 Demarest Avenue, Englewood, Cliffs NJ 07632, ԱՄՆ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության Երևան քաղաք, Մելիք Ադամյան փողոց 2/2՝ քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 3,632,200,000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ-ում ՀԲԸՄ-ի կողմից իրականացվող բարեգործական ծրագրերի շահառու հանդիսացող բոլոր անձիք,<br>- ՀԲԸՄ Վիրտուալ Հայկական համալսարանն իր ծրագրավորման և դասավանդման բաժիններով,<br>- երիտասարդական ծրագրերը,<br>- «Բացահայտիր Հայաստանն» անչափահաս սփյուռքահայ երեխաների Հայաստան այցելության և կամավոր աշխատանքի ծրագիրը,<br>- «Անդրանիկ» սկաուտական բանակումի ամենամյա կազմակերպման ծրագիրը ՀՀ Լոռու մարզում,<br>- սփյուռքահայերի համար նախատեսված ներգնա ամառային պրակտիկայի ծրագրերը,<br>- Հայաստանում սկաուտական շարժման ծրագիրը,<br>- «Ուսուցում արտասահմանում» հայազգի ուսանողների համար ծրագիրը,<br>- ՀԲԸՄ հարյուրամյա պատմությանը և գործունեությանը նվիրված թանգարան -արխիվը,<br>- ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության գրասենյակը:<br>ՀՀ Երևանի քաղաքապետարան (ստորգետնյա ավտոկայանատեղի): |

2

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագրը նախատեսվում է սկսել 2010 թվականի դեկտեմբերին և ավարտել 2014 թվականի դեկտեմբեր ամսին: | |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Աշխատանքները ընթանալու են հետևյալ փուլերով.<br>ա) Շենքի ճարտարապետական նախագծերի (էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի համար) նախագծում (2010թ. դեկտեմբեր - 2011թ. հունիս ամիսների ընթացքում) և հեղինակային վերահսկողություն (2011թ. հունիս - 2013թ. մայիս ամիսների ընթացքում) - 52,200,000 դրամ:<br>բ) տարածքում գտնվող ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների և այլն) տեղափոխման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2010թ. դեկտեմբեր - 2011թ. սեպտեմբեր ամիսների ընթացքում - 65,524,826 դրամ:<br>գ) Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որը նախատեսվում է իրականացնել 2011թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում - 28,605,920 դրամ<br>դ) Հողային աշխատանքներ և Երևան քաղաքի ստորգետնյա ավտոկայանատեղերի շինարարության աշխատանքները, որը նախատեսվում է իրականացնել մինչև 2012թ. ապրիլ ամիսը - 252,399,660 դրամ:<br>ե) Շենքի ընդհանուր շինարարական աշխատանքները՝ ներառյալ շենքի արտաքին տեսքի վերականգնման, ջերմամեկուսիչ արտաքին ապակե պատերի կառուցում, շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, ներքին հարդարման աշխատանքներ, կահավորանք և այլն, որոնք նախատեսվում է ավարտին հասցնել 2014 թվականի դեկտեմբերին - 3,233,469,594 դրամ: | |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Նարեկ Սարգսյան ճարտարապետական արվեստանոց» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01550435) հետ կնքված պայմանագրի շրջանակներում ՀԲԸՄ Երևանյան կենտրոնատեղի էսքիզային, ճարտարապետական և կոնստրուկտորական մասերի ճարտարապետական նախագծերի կազմում: | 52,200,000 դրամ |
| | | Կոմունիկացիոն ցանցերի մալուխների տեղափոխման նպատակով ենթակառույցների (կոմունիկացիոն ցանցերի, ենթակայանների, գազի, մետրոպոլիտենի ցանցերի մալուխների և այլն) տեղափոխման աշխատանքների իրականացում: | 65,524,826 դրամ |
| | | Էլեկտրաենթակայանի շենքի կառուցման աշխատանքներ, որի համար պայմանագիր է կնքվել «Հորիզոն-95» ՍՊԸ-ի հետ: | 28,605,920 դրամ |
| | | Հողային աշխատանքներ և ստորգետնյա ավտոկայանատեղերի կառուցում, որն իր մեջ ներառում է Երևանի քաղաքապետարանին պատկանող ավտոկայանատեղերի կառուցում ՀՀ կառավարության համար: | 252,399,660 դրամ |
| | | Շենքի ընդհանուր շինարարության աշխատանքներ՝ 1,036,129,594 դրամ:<br>Ջեռուցման, օդափոխության, օդորակման համակարգերի, ամրանների [illegible] հակահրդեհային ռետինների, վերելակների, ապակյա պատուհանների և դռների [illegible] հատակի սալիկների, մետաղական ճաղավանդակների, կանգնակների և արհեստական [illegible] զորգերի ներմուծում-697,340,000 դրամ: | 1,733,469,594 դրամ |
| | | Շենքի կառավարման էլեկտրոնային համակարգ, որը ներառում է մուտքի կառավարման համակարգը, ինքնապաշտպանման համակարգը, հակահրդեհային համակարգը, համակարգչային և հեռախոսային ցանցերը:<br>Նախատեսվում է պայմանագիր կնքել «Քեյր Բիլդինգ Սերվիսիզ» ՍՊԸ-ի հետ:<br>- աշխատանքների իրականացում՝ 48,200,000 դրամ,<br>- ապրանքների ներկրում՝ 81, 800, 000 դրամ: | 130,000,000 դրամ |

| | | | |
|---|---|---|---|
| | | Էլեկտրականության, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անցկացում՝ 186,480,000 դրամ: Ջրամատակարարման, ջրահեռացման և էլեկտրականության համակարգերի, սարքերի և սարքավորումների ներմուծում՝-33,520,000 դրամ: | 220,000,000 դրամ |
| | | Շենքի ներքին հարդարման աշխատանքներ՝ 673,000,000 ՀՀ դրամ, - ապրանքների ներմուծում՝ 67,000,000 ՀՀ դրամ: | 740,000,000 դրամ |
| | | Ապակյա փաթեթների, ներքին ապակյա պատերի և ատրիումավանդակի պատրաստման աշխատանքներ, որի համար նախատեսվում է պայմանագիր կնքել «Պրոֆ-Ալ» ՍՊԸ-ի հետ: | 60,000,000 դրամ |
| | | Ներքին և արտաքին լուսավորության սարքերի ու կախովի առաստաղների ներկրում | 210,000,000 դրամ |
| | | Դահլիճի, ցուցասրահի, հանդիպումների սենյակների և խոհանոցային կահավորանքի ներկում | 140,000,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում | |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ քաղաքաշինության նախարարություն և Երևանի քաղաքապետարան | |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչական ժողովի և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով: | |

Կազմեց

[illegible]
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության տնօրենի
տեղակալ ֆինանսական գծով
22-[illegible]

Ա· 8/6.15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա· 8/6.15


0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255


27.06.2014թ. № 07/80-2/8067

Ձեր №

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 25.06.2014թ. N 15/15.6/10148-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 18.02.2011թ. N Մ-041-Ա որոշմամբ (03.02.2012թ. N Մ-092-Ա, 28.09.2012թ. N Մ-766-Ա, 25.10.2013թ. N Մ-945-Ա և 16.05.2014թ. N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում նախատեսված է 350,000,000 ՀՀ դրամ գումարի չափով բեռների ներկրում: Հաշվի առնելով, որ վերը նշված ծրագրի շրջանակներում մեր հաշվարկներով արտերկրից արդեն իսկ փաստացի ներկրվել է 403,535,000 ՀՀ դրամ գումարի չափով բեռներ և ծրագրով նախատեսվածից ավելի է ներմուծվել 53,535,000 ՀՀ դրամ գումարով ապրանքներ, ուստի առաջարկում ենք ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի վերոհիշյալ որոշմամբ հաստատված ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

034/19547.14
27.06.2014թ.

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ** Մ-8/6.15

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

N: 06/3-4/7828-14
25.06.2014թ.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ պարոն Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան**

Ի պատասխան Ձեր ս.թ. հունիսի 25-ի թիվ 15/15.6/10148-14 գրության՝ հայտնում եմ, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հիմնադրամի հասցեով ներմուծված բեռի (1 տեղ, 280 կգ ընդհանուր քաշով, 6,457 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ՝ 600 եվրո փոխադրման ծախսերը) վերաբերյալ մեր իրավասության շրջանակներում առարկություններ չկան:

**Հարգանքով՝** **Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ**

Մաքսային մեթոդաբանության բաժին, 060-544-390, 544-342

034/19185-14
25.06.2014թ.

Մ-8/6.16

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ** | |
| ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 18.02.2011թ. N Մ-041-Ա որոշմամբ (03.02.2012թ. N Մ-092-Ա, 28.09.2012թ. N Մ-766-Ա, 25.10.2013թ. N Մ-945-Ա և 16.05.2014թ. N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում նախատեսված է 350,000,000 ՀՀ դրամ գումարի չափով բեռների ներկրում: Հաշվի առնելով, որ վերը նշված ծրագրի շրջանակներում մեր հաշվարկներով արտերկրից արդեն իսկ փաստացի ներկրվել է 403,535,000 ՀՀ դրամ գումարի չափով բեռներ և ծրագրով նախատեսվածից ավելի է ներմուծվել 53,535,000 ՀՀ դրամ գումարով ապրանքներ, ուստի առաջարկում ենք ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի վերոհիշյալ որոշմամբ հաստատված ծրագրում կատարել համապատասխան փոփոխություններ: | Հաշվի է առնվել՝ ներկայացվել է լրամշակված ծրագիր, որոշման նախագիծը խմբագրվել է: |

ՀԲԸՄ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն
ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION
Հայաստանի Ներկայացուցչություն - ARMENIA REPRESENTATION
AGBU

ԺՐ-8/6.15

14 հուլիսի, 2014թ.

Պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին
ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հուլիսի 9-ի N 15/15.6/11150-14 գրության և հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի 27-ի N 07/80-2/8067-14 գրությամբ ներկայացված առաջարկությունները կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա, սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա, 2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-945-Ա և 2014 թվականի մայիսի 16-ի N Մ-377-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի լրամշակված տարբերակը:

Կանխահայտ շնորհակալությամբ և հարգանքներով՝

Օհաննես Եորղանճյան
ՀԲԸՄ Հայաստանի ներկայացուցչության
տնօրեն-համանախագահ

ՀՀ [illegible]
094-2/1699
15 07 14

1534

Ալեք Մանուկյան 9, Երևան 0070, Հայաստան
9 Alex Manoogian St., Yerevan 0070, Armenia
+374-10-512250
+374-10-512252
agbuarm@agbu.am
www.agbu.am

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա ԺՐ-8/6.16
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-Ի N Մ-438-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 07/80-2/-14 և հուլիսի -ի N 06/3-3/-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվա-անի հուլիսի -ի N ԱՄ/22/-14, եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ** *է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2008-2013 թվականների ընթացքում իրականացվող «Էպելապսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում ծրագրի ժամկետը երկարաձգել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Հայ բժիշկներ» միության կողմից «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով Նիդերլանդներից ստացված բեռը (դեղորայք՝ «Sodium valproate 200 mg (blister) 100 tabs N 500» և «Carbamazepine 200mg (blister) 1000 tabs. N 60՝ 7 արկղ, 74 կգ ընդհանուր քաշով, 5, 800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 650 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Էպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ-438-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1080-Ա և 2012 թվականի նոյեմբերի 9-ի N Մ-911-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա.Յ./6.16

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

1.07.2014թ № 07/80-2/8156-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 26.06.2014թ. N 15/15.4/10237-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն)» որոշման որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի վերը նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը ավարտվել է 2013թ. դեկտեմբերի 31-ին:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ս. Այվազյան
Հեռ. 060 700 227

034/19818-14

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

Երևան-0015, Մ.Խորենացու 3, 7

N: 06/3-7/8115-14
30.06.2014թ

Ա.Յ./6.16

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր ս.թ. հունիսի 26-ի թիվ 15/15.4/10237-14 գրության հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի «Էպիլեպսիայով հիվանդ երեխաների արտագնա զննում, գործիքային հետազոտություն, խորհրդատվություն և բուժման օպտիմալացում» ծրագրի մասին» N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ի Կալիֆորնիա նահանգի «Հայ բժիշկներ» միության կողմից «Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով Նիդերլանդներից ներմուծված բեռի (դեղորայք՝ «Sodium valproate 200 mg (blister) 100 tabs N 500» և «Carbamazepine 200mg (blister) 1000 tabs. N 60» 7 արկղ, 74 կգ ընդհանուր քաշով, 5, 800 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 650 ԱՄՆ դոլար) վերաբերյալ մեր իրավասությունների շրջանակներում առարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Մաքսային մեթոդաբանության բաժին,
հեռ.՝ 060-544-390, 060-544-342,

034/19639-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 58 24 13
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ minister@moh.am

Ա·8/6.16

2.07.14 N ԱՏ/22.1/6674-14

Ձեր N ____________

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 26.06.2014թ. թիվ 15/15.4/10237-14 գրության կապակցությամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն) որոշման նախագծի վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարությունն իր իրավասության շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունի:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Կատարող՝ Էդուարդ Էքմեքջյան
ՀՀ ԱՆ աշխատակազմի դեղորայքային քաղաքականության բաժին
հեռախոս 52 27 21

020/20016-14

Ա·8/6.16

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի հուլիսի 14-ի N Մ-438-Ա որոշմամբ հաստատված ծրագրի ժամկետը երկարաձգելու և նույն ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին» («Սակուրա» բարեգործական հասարակական կազմակերպություն) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| - հայտնում ենք, որ որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման ժամկետը ավարտվել է 2013 թ. դեկտեմբերի 31-ին: | Դիտողությունը հաշվի է առնվել, կազմակերպության պարզաբանումը կցվում է: |

«ՍԱԿՈՒՐԱ» բարեգործական
հասարակական կազմակերպություն

✉ Երևան 375051, Գրիբոյեդովի 5ա, բն. 28
Հեռ. (37410) 23-24-29
էլ.փոստ: naghab@mail.ru

"SAKURA"
Charitable Union

✉ 5ª Griboyedov str., apt.28 Yerevan 375051
Tel: (37410) 23-24-29
E-mail: naghab@mail.ru

ՀՀ Ֆինանսների Նախարարի
տեղակալ - գլխավոր գանձապետ
պարոն՝ Ա. Ջանջուղազյանին
պատճենը ՀՀ Կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն՝ Ս. Տեր-Սիմոնյանին

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հուլիսի 3-ի No 15/15.4/10730-14 հայտնում ենք , որ «Սակուրա» ԲՀԿ –ի ծրագրով սահմանված ժամկետը ավարտվել է 2013 թվականի դեկտեմբերի 31-ին: Սակայն ծրագրով նախատեսված աշխատանքները դեռ չեն ավարտվել, այդ իսկ պատճառով խնդրում ենք վերը նշված ծրագրի սահմանները երկարաձգել մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

09.07.2014թ.

Հարգանքներով «Սակուրա»
ԲՀԿ-ի փոխնախագահ

Լևոն Մովսեսյան

094-20951
09 07 14

<u>ՆԱԽԱԳԻԾ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**_____ հուլիսի 2014 թվականի N Մ- - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-14 և հուլիսի -ի N ՎՄ/3-8/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքը անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի հուլիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՏՈՍՊ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01803966) 2014 թվականի հուլիսի 8-ին կնքված ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փրկարարների համար հանդերձանքի ձեռքբերում՝ 4,672,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

Ար. 8/7.1

15.07.14թ № 07/80-2/9426-14

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 10.07.2014թ. N 15/15.8/11240-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-615-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/21653-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N: 06/3-3/9528-14
16.07.2014թ Ար. 8/7.1

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ձեր 10.07.2014թ. N15/15.8/11240-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-615-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» (Հայկական կարմիր խաչի ընկերություն) որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում առաջարկություններ չկան:

Հարգանքով՝

Վ. Միրոյան

ԳՄՀՄ բաժին, Ն.Բեժանյան
060 544648, 647

034/21854-14

*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ա1·8/7.2

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

_____ հուլիսի 2014 թվականի N Մ- - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N Մ-615-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Հայկական Կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 3/3.8-1/-14 և հուլիսի -ի N ՎՄ/3-8/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքները անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2014 թվականի հուլիսի 27-ի Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» N Մ-615-Ա որոշմամբ հաստատված դրամաշնորհային ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2014 թվականի հուլիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ռեգուլյար» տեսակի բենզինի գնում՝ 1,317,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

«Պլանտ-Ա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01011477) 2014 թվականի հուլիսի 7-ին կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեղում մատակարարված ապրանքների և ծառայությունների մատուցում՝ 13,870,870 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Ա1·8/7.2

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

14.07.2014թ. № 07/80-2/9240-

Ձեր № __________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 08.07.2014թ. N 15/15.8/11081-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-615-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին (Հայկական կարմիր խաչի ընկերություն)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/21443-14
14.07.2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի   Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

N: 06/3-3/ 9494-14
16.07.2014թ.
ձր 8/7.2

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ձեր 08.07.2014թ. N15/15.8/11081-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-615-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին» որոշման նախագծի (Հայկական կարմիր խաչի ընկերություն) վերաբերյալ հայտնում եմ.

«Պլանտ-Ա» ՍՊԸ հետ 07.07.2014թ. կնքված գործարքը հիմնավորող պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ «Պլանտ-Ա» ՍՊԸ-ի կողմից մատուցած ծառայության և տեղում մատակարարված ապրանքների հանրագումարը կազմում է 13.870.869,4 դրամ, սակայն նույն պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ ՀՀ-ում մատակարարվող ապրանքների արժեքը կազմում է ընդամենը 3.384.000 դրամ, այսինքն պարզ չէ ներկայացված գործարքի գումարի մնացած մասի (13.870.869,4 - 3.384.000) դիմաց մատակարարվող ապրանքների/ծառայությունների էությունը:

Ելնելով վերոգրյալից, առաջարկում եմ ներկայացնել համապատասխան պարզաբանումներ:

Հարգանքով՝

Վ. Միրումյան

ԳՍՀՄ բաժին, Ն.Բեժանյան
060 544648, 647

034/21796-14

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 27-ի N Մ-615-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» (Հայկական կարմիր խաչի ընկերություն) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ | |
| «Պլանտ-Ա» ՍՊԸ հետ 07.07.2014թ. կնքված գործարքը հիմնավորող պայմանագրի 3.1 կետի համաձայն՝ «Պլանտ-Ա» ՍՊԸ-ի կողմից մատուցած ծառայության և տեղում մատակարարված ապրանքների հանրագումարը կազմում է 13.870.869,4 դրամ, սակայն նույն պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ ՀՀ-ում մատակարարվող ապրանքների արժեքը կազմում է ընդամենը 3.384.000 դրամ, այսինքն պարզ չէ ներկայացված գործարքի գումարի մնացած մասի (13.870.869,4 - 3.384.000) դիմաց մատակարարվող ապրանքների/ծառայությունների էությունը: | Դիտողությունը հաշվի է առնվել, կազմակերպության պարզաբանումը կցվում է: |

ձր 8/7.2

Armenian Red Cross Society

**Հայկական Կարմիր խաչի ընկերություն**

0015, ՀՀ, ք.Երևան, Պարոնյան 21/1, Հեռ./Ֆաքս՝ (+374 10) 58 36 30
Էլ.փոստ՝ redcross@redcross.am, Ինտ.կայք՝ www.redcross.am
21/1, Paronyan Str., Yerevan, 0015, RA, Tel./Fax: (+374 10) 58 36 30
E-mail: redcross@redcross.am, Web site: www.redcross.am

N 374

«16» 07 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Համաձայն ընդունված կարգի տեղեկացնում եմ, որ ՀՀ Ֆինանսների նախարարության դիտողությունների համապատասխան հստակեցվել է ՀՀ Կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014թ-ի հունիսի 27-ի N Մ–615-Ա որոշմամբ բարեգործական ճանաչված «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պլանտ-Ա» ՍՊԸ հետ կնքված փրկարարական և հրդեհային անվտանգության գույքի ձեռք բերման պայմանագիրը:

Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է **59.716.920** ՀՀ դրամ, որից **45.846.050** ՀՀ դրամ ներմուծման ենթակա ապրանքների համար, որը ստանալուն պես կդիմենք «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ձևակերպելու համար, **10.486.870** ՀՀ դրամ Կատարողի կողմից ներմուծվող ապրանքների մասով մատուցած ծառայության և **3.384.000** ՀՀ դրամ տեղում մատակարարված ապրանքների համար:

Խնդրում եմ սույն պայմանագիրը Կատարողի կողմից մատուցած ծառայության և տեղում մատակարարված ապրանքների մասով /13.870.870 ՀՀ դրամ/ ճանաչել որպես հարակից գործարք:

Կից ներկայացնում եմ սույն գործարքների պայմանագրի լրամշակված տարբերակը:

Հարգանքով՝

Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյան

# Պայմանագիր

## ծառայությունների վճարովի մատուցման մասին

ք.Երևան 07 հուլիս 2014թ.

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը /ՀԿԽԸ/ ի դեմս ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար՝ Աննա Եղիազարյանի /հետագայում «Պատվիրատու»/, որը գործում է համաձայն ՀԿԽԸ կանոնադրության, մի կողմից, և «Պլանտ-Ա» ՍՊԸ, ի դեմս տնօրեն՝ Արմեն Աղամյանի /հետագայում՝ «Կատարող»/, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1. Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել հետևյալ ծառայությունները՝ համաձայն սույն պայմանագրի 2.2.1 կետի «Կառուցենք դիմակայուն տեղական համայնքներ Վրաստանում և Հայաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպել կամավորական թիմերի համար անհրաժեշտ փրկարարական գույքի, կամավորական թիմերի և շահառու դպրոցների համար հրդեհային անվտանգության գույքի ձեռքբերումը և ՀՀ տեղափոխումը՝ համաձայն Հավելված 1-ի պահանջների, ինչպես նաև ՀՀ տարածքում ձեռքբերել և մատակարարել ապրանքներ՝ համաձայն Հավելված 2-ի պահանջների:
1.2. Աշխատանքների կատարման ժամկետը սահմանվում է մինչև 2014թ. օգոստոսի 11:
1.3. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները կատարված են համարվում Պատվիրատուի կողմից աշխատանքի հանձման-ընդունման ակտի ստորագրման պահից:

### 2. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

2.1. Կատարողը պարտավորվում է՝
2.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով և պայմանագրով նախատեսված ծավալով:
2.1.2 Ծառայությունը մատուցել անձամբ:
2.1.3 Պատվիրատուի պահանջով կարճ ժամկետում վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:
2.1.4 Ներմուծվող ապրանքները /տես Հավելված 1 և 2 պահանջները/ հանձնել Պատվիրատուին ՀՀ սահմանակետին՝ ներմուծելով Պատվիրատուի անունով:
2.2.Պատվիրատուն պարտավորվում է՝
2.2.1 Կատարողին տրամադրել լիազորագիր, որպես հանձնարարություն իր անունից սույն պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված և ներմուծման ենթական գույքը ձեռքբերելու և տեղափոխելու գործընթացը կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանգրեր կնքելու, համապատասխան փաստաթղթեր ստորագրելու և վճարումներ կատարելու նպատակով:
2.2.2 Վճարել կատարված ծառայությունների դիմաց համաձայն սույն պայմանագրի երրորդ կետի:
2.2.3 Կատարել ներմուծվող ապրանքների մաքսազերծում, ըստ Կատարողի կողմից ներկայացված փաստաթղթերի:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի
ա/Ցանկացած ժամանակ ստուգել աշխատանքի ընթացքը և որակը առանց Կատարողի գործունեությանը միջամտելու:
2.4. Կողմերից որևէ մեկը պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է մյուս կողմին փոխհատուցել չկատարելու հետևանքով պատճառած վնասները:

Ծրագրի գործողությունները իրականացնելու ընթացքում մրցույթի, որոշումների կամ պայմանագրի իրականացման համար արված ցանկացած անօրեն կամ կոռուպցիոն առաջարկ, վճարում, համաձայնություն կամ օգուտ/ շահ չպետք է կատարվի, խոստացվի, ընդունվի ինչպես ուղղակի այնպես էլ անուղղակի կերպով: Յուրաքանչյուր այսպիսի գործունեություն կհանգեցնի Համաձայնագրի դադարեցմանը, ինչպես նաև քաղաքացիական և/ կամ քրեական գործընթացի

հարուցմանը: Դանիական Կարմիր խաչի ընկերության հայեցողությամբ, նման գործունեության հետևանքները կարող են հանգեցնել ԴԿԽ-ի ընկերության կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերի /մրցույթների դադարեցմանը:

## 3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 59.716.920 /Հիսունինը միլիոն յոթ հարյուր տասնվեց հազար իննը հարյուր քսան/ դրամ, առանց ԱԱՀ: Ընդհանուր արժեքի 30% վճարվում է որպես կանխավճար:

3.2 Վճարման կարգը՝

3.2.1 Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրով նախատեսված ներմուծվող ապրանքների գումարը, ներառյալ ճանապարհածախսը, որը համաձայն Հավելված 1-ի կազմում է 45.846.050 ՀՀ դրամ վճարվում է սահմանակետին ապրանքների հանձման-ընդունման ակտը ստորագրելուց հետո, իսկ ներմուծվող ապրանքների ծառայության վճարը, որը համաձայն Հավելված 1-ի կազմում է **10.486.870** ՀՀ դրամ վճարվում է ներմուծված ապրանքների հանձման-ընդունման ակտը ստորագրելուց և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի հանձնաժողովի հարակից գործարքի համապատասխան որոշումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում:

3.2.2 Տեղում մատակարարվող ապրանքների գումարը, որը համաձայն Հավելված 2-ի կազմում է **3.384.000** ՀՀ դրամ վճարվում է տվյալ մատակարարման հանձման-ընդունման ակտը ստորագրելուց և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի հանձնաժողովի հարակից գործարքի համապատասխան որոշումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում:

## 4. Կողմերի պատասխանատվությունները

4.1. Կատարողը սույն պայմանգրով նախատեսված սահմանված ժամկետը խախտելուց, ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 0,15% չափով:

4.2. Պատվիրատուն սույն պայմանագրով նախատեսված գումարի վճարման սահմանված ժամկետը խախտելուց, ուշացման յուրաքանչյուր օրվա համար վճարում է տուգանք՝ պայմանագրի արժեքի 0,15% չափով:

## 5. Ընդհանուր դրույթներ

5.1. Սույն պայմանագրի պայմանները կարող են փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր կարգով:

5.2. Կողմերի միջև առաջացած և սույն պայմանագրով չկարգավորված վեճերը լուծվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.3. Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր ուժ, որից մեկական օրինակ տրված է կողմերին:

5.4. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարումը:

## 6. Կողմերի իրավաբանական հասցեները

| «Պատվիրատու» | "Կատարող" |
|---|---|
| Հայկական Կարմիր խաչի ընկերություն | "Պլանտ-Ա" ՍՊԸ |
| ք. Երևան Պարոնյան 21, | ք. Երևան, Ն. Զարյան 22, 8/4 շինություն |
| ՀՎՀՀ 00006023 | ՀՎՀՀ 01011477 |
| | "Հայէկոնոմբանկ", հ/հ 163008003507 |
| Գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Աննա Եղիազարյան | Արմեն Աղամյան |
| Ստորագրություն, Կ.Տ. | Ստորագրություն, Կ.Տ. |

Հավելված հ.1

07.07.2014թ Ներմուծվող ապրանքների ցանկը և տեխնիկական բնութագիրը

| N | Անվանում | Նկարագրություն | Արտադրող | Քան ակ | Չեռք բերման գին | Ծառայության վճար | Միավորի գինը | Ընդհանուր ձեռքբերման արժեք | Ընդհանուր ծառայության վճար | Ընդհանուր արժեք /դրամ/ | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սաղավարտ | Մոդել - Elios, Petzl | Ֆրանսիա | 48 | 56091 | 1009 | 57100 | 2692368 | 48432 | 2740800 | 12 Elios և 36 Alveo Vent, PETZL |
| 2 | Կարաբին | Մոդել - Locker Screw-Lock - PETZL | Ֆրանսիա | 48 | 13796 | 3604 | 17400 | 662208 | 172992 | 835200 | 24 Locker Screw Lock և 24 Spirit Screw Lock, PETZL |
| 3 | Ութնյակ | Մոդել - HUIT, Petzl | Ֆրանսիա | 20 | 12960 | 3940 | 16900 | 259200 | 78800 | 338000 | 10 Huit, Petzl և 10 Bud, Edelrid, Germany |
| 4 | Պարան | Ստատիկ, 10մմ, 50 մետր երկարությամբ - Կոլոմնա | Ռուսաստան | 16 | 39717 | 15183 | 54900 | 635472 | 242928 | 878400 | |
| 5 | Ժումար | Քաշը 196գր., մետաղը ալյումին, պարանի շառավիղը 8-13 մմ. - Petzl | Ֆրանսիա | 16 | 40971 | 6229 | 47200 | 655536 | 99664 | 755200 | |
| 6 | Ռոլիկ զաժիմով | Մոդել - ProTraxion P51; Petzl | Ֆրանսիա | 4 | 69540 | 6860 | 76400 | 278160 | 27440 | 305600 | 4 Micro Traxion, PETZL |
| 7 | Ռոլիկ | Մոդել - FIXE P05SO; Petzl | Ֆրանսիա | 8 | 17280 | 8070 | 25350 | 138240 | 64560 | 202800 | |
| 8 | Ռոլիկ / բլոկ | Մոդել - Tandem; Petzl | Ֆրանսիա | 8 | 37763 | 10437 | 48200 | 302104 | 83496 | 385600 | 6 Tandem, Petzl և 2 Pamir Fast, Kong |
| 9 | Ապահովության համակարգ | Մոդել - CORAX C51; Petzl | Ֆրանսիա | 16 | 69261 | 8189 | 77450 | 1108176 | 131024 | 1239200 | |
| 10 | Գլխարկ ձմեռային | Տաք ձմեռային գլխարկ/բալակլավա մոդել - KAMA d17, 100% պոլիեստեր, տրիկոտաժ | Չեխիա | 42 | 9574 | 1226 | 10800 | 402108 | 51492 | 453600 | 42 Under Helm, The North Face |
| 11 | Ձեռնոց ձմեռային | Մոդել - Cruise, Salomon, կտորը պոլիեստեր, պոլիամիդ ջրահեռացնող ծածկույթով, մեկուսիչը Actiloft™, ձեռքի հատվածը Soft PU | Ֆրանսիա | 42 | 18395 | 1205 | 19600 | 772590 | 50610 | 823200 | 24 Velocity XC Gloves, Lowe Alpine և 18 Velocity Glove, Lowe Alpine |
| 12 | Վրան անհատական | Մոդել - Fox Comfort 4 V2, Տենտը - Polyester, Վրանը - Polyester, Հատակը - Nylon, Ստոյկաները - ալյումին, Տարողունակությունը - 4 մարդ, Չափերը (սմ): 230*(95*2+195)*140 | Ռուսաստան | 20 | 258857 | 8943 | 267800 | 5177140 | 178860 | 5356000 | |
| 13 | Քնապարկ | Մոդել - RED FOX Forrest, չափը 230*80 սմ, քաշը 2,0 կգ, կտորը Polyester 190T W/P, մեկուսիչը Vario Dry 2100 g/m, ջերմաստիճանը տատանումը -5...+15 | Ռուսաստան | 234 | 28749 | 7051 | 35800 | 6727266 | 1649934 | 8377200 | |
| 14 | Ձյունամուղակ Снегоступ | Մոդել - RANDO, TSL Outdoor, պատրաստված պլաստիկից, քաշը 910 գրամ, նախատեսված մակսիմալ քաշը 110 կգ., լայնքը 22,5 սմ., երկարությունը 61 սմ. | Ֆրանսիա | 30 | 79030 | 8470 | 87500 | 2370900 | 254100 | 2625000 | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 15 | Ճակատի լապտեր | Մոդել - Tikka, Petzl, մարտկոցների աշխատանքային ժամանակը մակսիմալ ռեժիմով 90 ժամ, իսկ էկոնոմով` 120, լուսավորում է մինչև 29 մետր, 4 սպիտակ սվետոդիոդ, քաշը 81 գրամ մարտկոցներով, ջրապաշտպան/անթափանց, սվետոդիոդների և մարտկոցների մեկ կորպուս և այլն: | Ֆրանսիա | 42 | 20625 | 2575 | 23200 | 866250 | 108150 | 974400 | |
| 16 | Կրակմարիչ | Փոշիով կրակմարիչ, լիցքավորված փոշու կշիռը 4 կգ, ընդհանուր կշիռը մոտ 6,5 կգ, վերալիցքավորման ժամկետը 5 տարի: Ջերմաստիճանային ռեժիմը -40C մինչև +50C, փոշու սրսկման տևողությունը 10 վայրկյան, փոշու հոսքագծի երկարությունը 3 մետր: Կրակմարիչները պետք է նախատեսված լինեն այրվող պինդ նյութերից, հեղուկներից, գազերից և էլեկտրականությունից առաջացած հրդեհները մարելու համար: | Ռուսաստան | 816 | 17002 | 6868 | 23870 | 13873632 | 5604288 | 19477920 | |
| 17 | Հակահրդեհային վահանակ | Չափսերը /մմ/ 1210x1100, պինդ մետաղական (այսինքն, ոչ թե ռեյկաներով ամրացվող, այլ միակտոր պինդ մետաղական, որի վրա էլ կախվում են գործիքները, այն ավելի ամուր է, որակով և երկարակյաց) գույնը կարմիր, կոմպլեկտի մեջ ներառվող պարագաները` հրշեջ բահ 1 հատ, հրշեջ դույլ 2 հատ, հրշեջ լոմ 1 հատ, հրշեջ բագոռ 1 հատ և հրշեջ կացին 1 հատ: | Ռուսաստան | 142 | 62850 | 11550 | 74400 | 8924700 | 1640100 | 10564800 | |
| | Ընդամենը | | | | | | | 45 846 050 | 10 486 870 | 56 332 920 | |

«Պատվիրատու»
Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ք. Երևան Պարոնյան 21,
ՀՎՀՀ 00006023

Գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյան

Ստորագրություն, Կ.Տ.

"Կատարող"
"Պլանտ-Ա" ՍՊԸ
ք. Երևան, Ն. Զարյան 22, 8/4 շինություն
ՀՎՀՀ 01011477
"Հայէկոնոմբանկ", h/h 163008003507
Տնօրեն
Արմեն Աղամյան

Ստորագրություն, Կ.Տ.

Հավելված h.2
07.07.2014թ ՀՀ տարածքում ձեռք բերվող և մատակարարվող ապրանքների ցանկ և տեխնիկական բնութագիր

| N | Անվանում | Նկարագրություն | Արտադրող | Քանակ | Միավորի գինը առանց ԱԱՀ /դրամ/ | Արժեքը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Չեռնոց | Պարանի հետ աշխատելու համար, ամուր կտորից /բրեզենտ, կաշի, զամշ և այլն/ | Թուրքիա | 80 | 820 | 65600 |
| 2 | Դիմակ | Եռաշերտ պաշտպանիչ դիմակ /փոշուց, վարակից և այլն/ | Եվրոպական կամ Չինաստան | 320 | 100 | 32000 |
| 3 | Լոմ | Երկաթե, 1,1-1,3 մետր երկարությամբ | Ռուսաստան | 8 | 6400 | 51200 |
| 4 | Կացին | Երկաթե, 0,6-0,8 մետր երկարությամբ, 2-2,3 կգ. քաշով | Ռուսաստան | 8 | 6600 | 52800 |
| 5 | Բահ | Սուր ծայրով, 1,6-1,8 մետր երկարությամբ | Ռուսաստան | 20 | 3400 | 68000 |
| 6 | Բարձրախոս | ER 66 SERIES, 12V, 8 մարտկոց | Չինաստան | 8 | 30600 | 244800 |
| 7 | Լապտեր | Միջին չափի, մարտկոցներով | Չինաստան | 40 | 3600 | 144000 |
| 8 | Լեռնադահուկային փայտեր | Պատրաստված է բամբուկից կամ համարժեք | Չինաստան | 30 | 13400 | 402000 |
| 9 | Ծածկոց | Տաք, 160x220, 2,5-3 կգ | Չինաստան | 112 | 9850 | 1103200 |
| 10 | Թերմոս | Չժանգոտվող մետաղից, ներսից ապակի, 1լ տարողությամբ | Չինաստան | 30 | 4000 | 120000 |
| 11 | Սուլիչ | Սպորտային, միջին չափի, մետաղական | Չինաստան | 24 | 1600 | 38400 |
| 12 | Սրսկման մեքենա մեխանիկական | Մոդել 3WB-16E, ջրի տարողությունը` 16 լ, չափսերը (սմ)` 37,5*19,5*51, բաքի տեսակը` PP, աշխատանքային ճնշումը` 0.25-0.45 MPA: | Չինաստան | 90 | 11800 | 1062000 |
| | Ընդամենը | | | | | 3 384 000 |

«Պատվիրատու»
Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ք. Երևան Պարոնյան 21,
ՀՎՀՀ 00006023

Գլխավոր քարտուղար
Աննա Եղիազարյան

Ստորագրություն, Կ.Տ.

"Կատարող"
"Պլանտ-Ա" ՍՊԸ
ք. Երևան, Ն. Զարյան 22, 8/4 շինություն
ՀՎՀՀ 01011477
"Հայէկոնոմբանկ", h/h 163008003507
Տնօրեն
Արմեն Աղամյան

Ստորագրություն, Կ.Տ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

____ հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա Mr. 8/7.3

քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր N 1)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի հունիսի 20-ի N ԱԿ/15-1/6189-14 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հունիսի -ի N 3/3.8-2/-14 և հունիսի -ի N 06/3-4/-14 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 7-րդ ենթակետում «24,028,77եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «23,978,77 եվրոյին համարժեք դրամ» բառերով, իսկ «821793» թիվը փոխարինել «816793» թվով;

2. որոշմամբ հաստատված ծրագրի 9-րդ կետի 17-րդ ենթակետում «10.000 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «15.000 եվրոյին համարժեք դրամ» բառերով, ինչպես նաև «2-րդ տարում՝ 2013 թվականին» բառերը փոխարինել «3-րդ տարում՝ 2014 թվականին» բառերով:

2. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված դրամաշնորհային ծրագրերի միջոցներով իրականացվող գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (2013 թվականի հոկտեմբերի 25-ի N Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մուրան» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00084235) 2014 թվականի ապրիլի 17-ին կնքված՝ N ԳՀ- ԾՀԱՊՁԲ-11/21-2014/4, պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված ավտոմեքենայի ձեռքբերում՝ 7,900,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն:

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ - Գ Լ Խ Ա Վ Ո Ր Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Mr. 8/7.3

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

26.06.14 №07/80-2/787

Ձեր № ____________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 20.06.2014թ. N 15/15.4/9858-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր) (1)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով՝

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/19257-14
26.06.14թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ

**ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**

**ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ**

ԺՐ 8/Ձ.3

06/3-3/8775-14
08.07.2014թ.

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7
հեռ.՝ 060 544-302

ՀՀ առողջապահության նախարարության
աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար
պարոն Ա. Կարապետյանին

պատճենը՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի նախագահ
պարոն Ս. Տեր-Սիմոնյանին

*Հարգելի պարոն Կարապետյան*

Հաշվի առնելով Ձեր 01.07.2014թ. №ԱԿ/15-16651-14 գրությամբ ներկայացված նկատառումները, այն է՝ փոփոխություններ կատարել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 31.01.2012թ. N068-Ա որոշմամբ (25.10.2013թ. NՄ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում՝ նախատեսելով ծնոքբերվող ավտոմեքենայի արժեքի ավելացում, հայտնում եմ, որ անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան նոր որոշման նախագիծ:

Հարգանքով՝ Վ. Միրումյան

ԳՄՀՄ բաժին, Ա. Բաբսեղյան
հեռ. 060 544648

034/20670-14
08.07.2014թ.

ԺՐ 8/Ձ.3

ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի N Մ-068-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» («ՀՀ-ում տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլյոզի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր N 1) որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ**

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| **ՀՀ ֆինանսների նախարարության դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ** | |
| որոշման նախագծի 1-ին կետի համաձայն՝ «Մուրան» ՍՊԸ հետ կնքված գործարքի արժեքը կազմում է 7900000 դրամ՝ առանց ԱԱՀ-ի, մինչդեռ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 31.01.2012թ. N068-Ա որոշմամբ (25.10.2013թ. NՄ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի 17-րդ կետի համաձայն՝ ավտոմեքենայի ձեռքբերում նախատեսված է 2013թ. ընթացքում՝ 10000 եվրոյին համարժեք դրամի չափով, ուստի հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել նոր որոշման նախագիծ: | Դիտողությունը հաշվի է առնվել, նախագիծը փոխվել է, կազմակերպության պարզաբանումը կցվում է: |

ԺՐ 8/Ձ.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐ - 8/7.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

1.07.2014թN ԱԿ/15-1/6651-14
Ձեր N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ՎԱԽԹԱՆԳ ՄԻՐՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Միրումյան

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հունիսի 25-ի N 06/3-3/7746-14 գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն առաջարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013թ. հոկտեմբերի 25-ի թիվ Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

020/19930-14

ԱՐ - 8/7.3

1. Ծրագրի 9-րդ կետի 17-րդ ենթակետում «10000 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «15000 եվրոյին համարժեք դրամ» բառերով, իսկ «2-րդ տարում՝ 2013 թվականին» բառերը փոխարինել «3-րդ տարում՝ 2014 թվականին» բառերով:

Հարկ է նշել, որ առաջարկվող փոփոխությունները համաձայնեցված են դրամաշնորհատու հանդիսացող ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմնադրամի հետ և կապված են այն հանգամանքի հետ, որ ավտոմեքենայի ձեռքբերման համար գումարը նախատեսվել է ծրագրի 2014 թվականի նախահաշվում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. Կ. [signature] ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի
ծրագրերը համակարգող խումբ
Հեռ. 543650

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Մ. 8/7.3

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 10) 56 43 20
ֆաքս (+ 374 10) 52 68 44
էլ. փոստ info@moh.am

17.07.14 N ԱԿ/15-1/7381-14
Ձեր N ______

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՍԻՄՈՆ ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի լրումն 2014 թվականի հուլիսի 1-ի N ԱԿ/15-1/6651-14 գրության՝ հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունն առաջարկում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ (ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013թ. հոկտեմբերի 25-ի թիվ Մ-1020-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Ծրագրի 9-րդ կետի 7-րդ ենթակետում «2402877 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «2397877 եվրոյին համարժեք դրամ» բառերով, իսկ «821793» թիվը փոխարինել «816793» թվով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՀՀ ԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝
ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի
ծրագրերը համակարգող խումբ
Հեռ. 543650

020/22047-14

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

___ հուլիսի 2014 թվականի N Մ- -Ա
քաղ. Երևան

Մ. 8/8.1

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 4-Ի N Մ-867-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն**
**(«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի -ի N 07/80-2/-14 և հուլիսի -ի N ՎՄ/-/-14 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի հունիսի 27-ի N 129 գրությունը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատնկի իրականացում» ծրագրի մասին» N Մ-867-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի տնօրեն
Արեգ Մաղաքյանի կողմից

«16» հուլիսի 2014 թ.

«Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի և Արցախի քաղաքային և գյուղական համայնքներում բնապահպանական իրավիճակի բարելավում, շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրերի իրականացում, դպրոցականների, ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների կազմակերպում և իրականացում, անտառատընկման աշխատանքների իրականացում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հայաստան ծառատունկ ծրագիր» բարեգործական հիմնադրամ («Armenia tree project» Charitable Foundation (ATP)՝ Հայկական համազումարի անդամ կազմակերպություն – ԱՄՆ, 65 Main Street, Watertown, MA 02472) |
| 4. | Ծրագրի իրականացնողը | «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Արշակունյաց 57/5, իրավաբանական հասցեն՝ Տպագրիչների 9, բն 55, ՀՎՀՀ՝ 02554563): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն բնապահպանության բնագավառ: |



| | | |
|---|---|---|
| 6. | Ծրագրի բյուջեն | 127,120,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետությունը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբեր 30-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | • Հիմնադրամի Մարգահովտի և Կարինի կրթական կենտրոններում դպրոցականների ու ուսուցիչների վերապատրաստման բնապահպանական դասընթացների կազմակերպում և իրականացում, կրթական ծրագրի անհրաժեշտ ուսունական նյութերի տպագրում, տեղեկատվական, բուկլետների և թռուցիկների, ցուցանակների պատրաստում - 31,050,000 դրամ (տարեկան 12,420,000 դրամ)<br>- 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը.<br><br>• Արագածոտնի մարզի Կարին, Արարատի մարզի Խաչփար և Լոռու մարզի Մարգահովիտ գյուղերում գործող՝ հիմնադրամին պատկանող տնկարաններում տնկանյութերի աճեցում - 36,800,000 դրամ (տարեկան 14,720,000 դրամ)<br>- 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2014 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը.<br><br>• Մարգահովիտ տնկարանի և համայնքների բնակիչների հողատարածքներում տնկիների աճեցում և դրանց լայնածավալ անտառատնկում -28,820,000 դրամ (տարեկան 11,528,000 դրամ)<br>- 2013 թվականի հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2014 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2015 թվականի մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br><br>• ՀՀ և ԼՂՀ քաղաքային և գյուղական համայնքներում ծառատունկի իրականացում 17,030,000 դրամ (տարեկան 6,812,000 դրամ)<br>- 2013 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2014 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը, |

| | | |
|---|---|---|
| | | - 2014 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը,<br>- 2015 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 30-ը,<br>- 2015 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 15-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գին | • տնկարանների համար գյուղատնտեսական գործիքների և սարքավորումների ձեռքբերում – 8,030,000 դրամ,<br>• շինանյութեր ձեռքբերում – 8,200,000 դրամ,<br>• բուժանյութերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների ձեռքբերում – 3,750,000 դրամ,<br>• բամբակյա կտորի ձեռքբերում՝ մշտադալար արմատները փաթաթելու համար – 1,400,000 դրամ,<br>• ոռոգման ջրագծերի խողովակների և օժանդակ նյութերի ձեռքբերում – 2,340,000 դրամ,<br>• ցանկապատի ցցերի, փշալարի և օժանդակ նյութերի ձեռքբերում - 10,500,000 դրամ<br>• շրջակա միջավայրի վերաբերյալ կրթական ծրագրի վերապատրաստման դասընթացների նյութերի ձեռքբերում – 10,200,000 դրամ,<br>• ուսումնական կենտրոնի համար գույքի և կահույքի ձեռքբերում - 4,800,000 դրամ,<br>• երկու կիսաբեռնատար տրանսպորտային միջոցների ձեռքբերում և ներմուծում - 29,480,000 դրամ,<br>• տրանսպորտային միջոցների պահեստամասերի ձեռքբերման և վերանորոգման ծախսեր – 11,000,000 դրամ,<br>• վառելիքի ձեռքբերում - 19,000,000 դրամ,<br>• համակարգչային տեխնիկայի ձեռքբերում և ներմուծում - 5,000,000 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ընդամենը՝ 13,420,000 դրամ (2.5 տարվա համար)<br><br>• ֆինանսական գործունեության տարեկան հաշվետվությունների աուդիտի իրականացում - 2,400,000 դրամ,<br>• գրասենյակային նյութերի և պարագաների ձեռքբերում - 1,000,000 դրամ,<br>• կոմունալ ծախսեր (Երևանի գրասենյակ, Կարին, Խաչփար գյուղերի տնկարաններ և Մարգահովիտ գյուղի ուսումնական կենտրոն) – 6,800,000 դրամ,<br>• հեռախոսակապի ծառայություն - 3,220,000 դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ (ԿԱԻ) ՖԲԸ՝ կրթական ձեռնարկների մշակում:<br>ՀՀ բնապահպանության նախարարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն և «Հայանտառ» ՊՈԱԿ՝ տնկիների, ցանկապատի նյութերի (փայտանյութ) ձեռքբերում, համատեղ անտառատնկման աշխատանքների իրականացում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Բարեգործի կողմից իրականացվող պարբերական մշտադիտարկման միջոցով, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի
ֆինանսական ղեկավար

Ռուզաննա Առուստամյան

02554563 ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ-ԳԼԽԱՎՈՐ ԳԱՆՁԱՊԵՏ

Ա-8/8.1

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 255

08.07.2014թ. № 07/80-Ա/8816-14

Ձեր № ____________________

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան

Ի պատասխան Ձեր 03.07.2014թ. N 15/15.6/10728-14 գրության՝ կապված ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի հետ, հայտնում ենք, որ մեր իրավասությունների շրջանակներում դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Հարգանքով

Ատոմ Ջանջուղազյան

Կատարող՝ Ն. Կարապետյան
հեռ. 060 700 227

034/20728-14
08.07.2014թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0015, Երևան, Մ.Խորենացու 3, 7
Հեռ. 060 544303

№ 06/3-3/8830-14
08.07.2014թ.

Ա-8/8.

**ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի**
**համակարգման հանձնաժողովի նախագահ**
**պարոն Ս. Տեր-Սիմոնյանին**

*Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան*

Ձեր 03.07.2014թ. թիվ 15/15.6/10728-14 գրությանը կից ներկայացված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի վերաբերյալ հարկային և մաքսային մարմիններին վերապահված իրավասությունների շրջանակներում հայտնում եմ.

Ծրագրի 9-րդ կետում նշված առանձին միջոցառումների համար նախատեսված արժեքների հանրագումարը (118.500.000 դրամ) կազմակերպչական ծախսերի (13.420.000 դրամ) հետ միասին գերազանցում է ծրագրով նախատեսված բյուջեի արժեքին: Նմանատիպ անճշտություն է առկա նաև ծրագրի 10-րդ կետում նշված արժեքների ընդհանուր գումարի (111.700.000 դրամ) և կազմակերպչական ծասերի հանրագումարի պարագայում:

Հաշվի առնելով վերոնշյալ անհամապատասխանությունները, առաջարկում եմ հստակեցնել նախագծով վերաշարադրվող ծրագիրը:

Հարգանքով՝

**Վ. Միրումյան**

ԳԱՀՄ բաժին, Ա. Բարսեղյան
հեռ. 060 544648

034/20736-14
08.07.2014թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին («Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ)» որոշման նախագծի կապակցությամբ առաջարկությունների և դիտողությունների վերաբերյալ

| Դիտողության կամ առաջարկության բովանդակությունը | Հիմնավորում |
| --- | --- |
| ՀՀ ֆինանսների նախարարության (հարկային) դիտողությունների ու առաջարկությունների վերաբերյալ | |
| Ծրագրի 9-րդ կետում նշված առանձին միջոցառումների համար նախատեսված արժեքների հանրագումարը (118.500.000 դրամ) կազմակերպչական ծախսերի (13.420.000 դրամ) հետ միասին գերազանցում է ծրագրով նախատեսված բյուջեի արժեքին: Նմանատիպ անճշտություն է առկա նաև ծրագրի 10-րդ կետում նշված արժեքների ընդհանուր գումարի (111.700.000 դրամ) և կազմակերպչական ծասերի հանրագումարի պարագայում: Հաշվի առնելով վերոնշյալ անհամապատասխանությունները, առաջարկում եմ հստակեցնել նախագծով վերաշարադրվող ծրագիրը: | Հաշվի է առնվել՝ ներկայացվել է լրամշակված ծրագիր: |

Ա.Ց/8.1

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամ
Հայաստան ծառատունկ ծրագիր
ՀՀ, Երևան 0026
Արշակունյաց պող. 57/5
Հեռ.՝ (374 10) 447401/ 447402
Հեռ./ֆաքս՝ (374 10) 447726

ATP Charitable Foundation
Armenia Tree Project
57/5 Arshakunyats Ave.
Yerevan 0026, RA
Tel.: (374 10) 447401/ 447402
Tel./Fax: (374 10) 447726

Ա.Ց/8.1

16 հուլիսի, 2014թ.

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողովի
նախագահ՝
Պարոն Սիմոն Տեր-Սիմոնյանին

Հարգելի պարոն Տեր-Սիմոնյան,

Ի պատասխան Ձեր 2014 թվականի հուլիսի 9-ի N 15/15.6/11151-14 գրության և ՀՀ ֆինանսների նախարարության 2014 թվականի հուլիսի 8-ի N 06/3-3/8830-14 գրությամբ ներկայացված դիտողությունների, կից ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 4-ի N Մ-867-Ա որոշմամբ հաստատված՝ «ԷյԹիՓի» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետություններում ծառատունկի իրականացում» ծրագրի լրամշակված տարբերակը:

Հարգանքով,

«ԷյԹիՓի» բարեգործական
հիմնադրամի տնօրեն
Արեգ Սիմոնյան

ATP CHARITABLE FOUNDATION 02554563

1559

ՀՀ ... 099-22044
17 07 14